ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

դեկտեմբերի 2020 թվականի №Ա
ք.Երևան

«ՊՐՈՄ ՍԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՊՐՈՄ ՍԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի հոկտեմբերի 13-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով անվավեր ճանաչել Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 9-ի №308Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում): Որպես վարչական բողոքի հիմնավորում, Ընկերությունը, կրկին մեջբերելով Որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի շրջանակում իր ներկայացրած փաստարկները, հայտնել է հետևյալը.

1) Հանձնաժողովը Որոշման մեջ չի անդրադարձել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացված պարզաբանումներին, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ Հանձնաժողովը վարչական վարույթի մասնակցի, տվյալ դեպքում՝ Ընկերությանը լսված լինելու իրավունքն ապահովել է՝ ունենալով ի սկզբանե ձևական նորմերի պահպանման խնդիր: Հայտնել է, որ քննարկվող հարցի առնչությամբ երկիմաստ մեկնաբանումներից խուսափելու և պարզաբանում ստանալու նպատակով դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն, սակայն որևէ պարզաբանում չի ստացել,
2) մատնանշելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ, 56-րդ, 57-րդ, 63-րդ հոդվածները, ինչպես

նաև Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներ, պնդել է, որ Հանձնաժողովը բավարարվել է անորոշ ձևակերպումներով, չի հստակեցրել ենթադրաբար խախտված իրավանորմերը, չի բացահայտել Որոշման հիմքում առկա բոլոր էական փաստական ու իրավական հիմքերը, ինչի արդյունքում կայացված Որոշումը չի բավարարում իրավական որոշակիության ու պատճառաբանվածության՝ օրենսդրությամբ սահմանված և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վերահաստատած պահանջները: Ընկերությունը պնդել է նաև, որ Որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողովի կողմից չեն պահպանվել ընթացակարգային պահանջները, մասնավորապես, վարույթի անհիմն ձգձգումների արդյունքում ընդունվել է ոչ իրավաչափ վարչական ակտ,

3) Ընկերությունը նաև խնդրել է, հաշվի առնելով այն, որ պարզաբանումներ ստանալու համար դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն, բողոքը քննարկել վերջինից, ինչպես նաև այլ իրավասու մարմիններից հարցի առնչությամբ պարզաբանումներ ստանալուց հետո,

բ) սույն թվականի հոկտեմբերի 13-ից հարուցվել է Որոշման վերաբերյալ բողոքի քննարկման վարչական վարույթ, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 15-ի №ՍՇ/34.3-Մ2-12/4329-2020 գրությամբ,

գ) վարչական վարույթի ընթացքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2020 թվականի նոյեմբերի 11-ի №ԴԳ4/89 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի №961-Ն որոշման 2-րդ գլխի 9-րդ կետի համաձայն «Էլեկտրահաղորդման օդային գծից (ՕԳ) ներանցումը» սահմանվում է՝ «ՕԳ-ի ճյուղավորումը ներքին էլեկտրահաղորդագծին միացնող էլեկտրահաղորդագիծ՝ հաշված շենքի կամ կառույցի արտաքին մակերևույթի (պատի, տանիքի) վրա տեղակայված մեկուսիչից մինչև ներանցման սարքվածքի սեղմակները», հետևաբար Ընկերությանը տրամադրված №ՏՊ-531-110/0603 տեխնիկական պայմանների 2-րդ կետում նշված ներանցումով միացումը դա միացվող էլեկտրահաղորդագծի անցկացումն է, որը չի մտնում էլեկտրահաղորդման օդային գծի սահմանման հասկացության մեջ,

դ) Հանձնաժողովը, 2020 թվականի նոյեմբերի 11-ին սույն վարչական վարույթի շրջանակում հրավիրված նիստի արդյունքում, հաշվի առնելով Ընկերության ներկայացրած փաստարկները և ելնելով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության անհրաժեշտությունից, իր 2020 թվականի նոյեմբերի 13-ի №ԳԲ/34.3-Մ2-12/4634-2020 և դեկտեմբերի 10-ի №ԳԲ/34.3-Մ2-12/4934-2020 գրություններով, փոխօգնության կարգով դիմել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն՝ խնդրելով պարզաբանել, արդյոք «Պրոմ Սինթեզ» արևային էլեկտրակայանի (այսուհետ՝ Կայան) կառուցման նախագծային փաստաթղթերը, որոնց համաձայն Կայանը բաշխման ցանցին միանալու է «Փարվանա» 110կՎ օդային գծի թիվ 57 հենարանին ներանցումով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն ենթակա է փորձաքննության, թե ոչ: Ելնելով նշվածից՝ վարչական վարույթի ժամկետը 2 անգամ 30-ական օրով երկարաձգվել է,

ե) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը 2020 թվականի նոյեմբերի 25-ի №1/32.12/12538-2020 և դեկտեմբերի 22-ի №1/32.12/13217-2020 գրություններով հայտնել է, որ եթե նախատեսվող գործունեությունը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետում սահմանված՝ «էլեկտրահաղորդման գծեր՝ 110 կՎ և ավելի լարման» գործունեության տեսակին, ապա այն ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և, որ նախատեսվող գործունեության տեսակը ենթակա է փորձաքննության՝ անկախ էլեկտրահաղորդման գծի միացման ձևից և էլեկտրահաղորդման գծի երկարությունից,

զ) իրականացված վարույթի շրջանակում հաստատված է համարվել, որ՝

1) Որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետը, համաձայն որի՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Հայաստանի Հանրապետության

օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

- Կարգի №3 հավելվածի 7-րդ կետը, համաձայն որի՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է,
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետը, համաձայն որի՝ 110 կՎ և ավելի լարման էլեկտրահաղորդման գծերի կառուցման նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և գնահատման,

2) Որոշումն ընդունվել է գործող իրավակարգավորումների, այդ թվում՝ Օրենքի պահանջներին համապատասխան և լիովին բավարարում է վարչական ակտի որոշակիության ու պատճառաբանվածության պահանջներին: Մասնավորապես, հիմնավորված ու որոշակի վարչական ակտ ընդունելու՝ վարչական մարմնի պարտականությունն իր ամրագրումն է ստացել Օրենքի 55-57-րդ հոդվածներում: Նշված իրավանորմերի բովանդակությունը բացահայտվել է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի իրավակիրառ պրակտիկայում: Այսպես, №ՎԴ/2127/05/11 2014 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ դատարանը նշել է, որ. «...Օրենսդիրը հստակ սահմանել

է, որ վարչական ակտը պետք է հիմնավորում պարունակի: Վարչական ակտում պետք է նշվեն համապատասխան վարչական ակտ ընդունելու համար բոլոր էական փաստական և իրավական հիմքերը: Օրենսդրի կողմից վարչական ակտի հիմնավորում պարունակելու պահանջն ինքնանպատակ չէ, այն հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց, ովքեր համաձայն չեն ընդունված վարչական ակտի հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով՝ գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնարար իրավունքները: Միաժամանակ, վարչական մարմնի կողմից ընդունված հիմնավորված վարչական ակտը գործնականում իրական հնարավորություն է տալիս վարչական բողոքը քննարկող վարչական մարմնին կամ այն քննող դատարանին պարզելու այն փաստական և իրավական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում: Այսպիսով, հաշվի առնելով այն, թե ինչ նպատակով է օրենսդիրը նախատեսել վարչական ակտի հիմնավորված լինելու պահանջը, սույն պահանջի կատարումը չի կարող մեկնաբանվել այնպես, որ այն միայն նշանակի վարչական մարմնի պարտականություն՝ իր ընդունած վարչական ակտում լոկ հիշատակելու կիրառվող իրավական ակտը կամ իրավական նորմը: Վարչական մարմինը, վարչական ակտ կայացնելիս, պարտավոր է հիմնավորել որոշման մեջ վկայակոչված իրավական նորմերի կիրառելիությունը՝ նշելով կիրառման ենթակա կոնկրետ իրավական նորմը, դրա համապատասխան մասը կամ կետը՝ բացահայտելով կոնկրետ գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառման ենթակա իրավական նորմի բովանդակությունը..»:

Մեկ այլ՝ №ՎԴ/6171/05/15 գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2019 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը նշել է. «....«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածներում վկայակոչված իրավական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտերը պետք է հիմնավորված լինեն. օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտի

հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը, այսինքն՝ վարչական մարմինը վարչական ակտն ընդունելիս պարտավոր է վարչական ակտում նշել այն բոլոր փաստական հանգամանքները և իրավական հիմքերը, որոնք հիմք են հանդիսացել տվյալ վարչական ակտն ընդունելու համար»:

Վերոնշյալ իրավական վերլուծություններից բխում է, որ վարչական ակտի հիմնավորվածության պահանջը պահպանված է համարվում, եթե վարչական ակտում արտացոլված են այն փաստական ու իրավական հիմքերը, որոնք անմիջականորեն դրված են վարչական ակտի հիմքում: Այլ կերպ, վարչական ակտի հիմնավորվածության պահանջը ենթադրում է ոչ թե տվյալ վարչական ակտի հիմքում դրված բոլոր իրավական ու փաստական հիմքերի նշում վարչական ակտում, այլ միայն տվյալ վարչական ակտով ուղղակիորեն կարգավորվող վարչաիրավական հարաբերության համար ամենաուղղակի ու հիմնական հիմքերի: Հակառակ տրամաբանության դեպքում վարչական ակտի հիմնավորվածության պահանջը կլիներ ոչ չափելի, քանի որ այդ պարագայում պարտադիր կլիներ վարչական ակտում ներառել նաև այնպիսի հիմքեր, որոնք ունեն որևէ կապ՝ անգամ միջանկյալ, հեռավոր կամ անուղղակի:

Ինչ վերաբերում է իրավական որոշակիության սկզբունքին, ապա Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը բազմիցս իր որոշումներում անդրադարձել է այդ սկզբունքին (ՍԴՈ-630, ՍԴՈ-753, ՍԴՈ-1176, ՍԴՈ-1213, ՍԴՈ-1270 և այլն): Մասնավորապես, իր ՍԴՈ-1176 և ՍԴՈ-1213 որոշումներում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «… իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» և «… իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Մեկ այլ՝ ՍԴՈ-1270 որոշմամբ դատարանը նշել է. «… Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական

մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով:» և «... իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին»:

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ մասնավորապես, գտնելով, որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է («Busuioc v. Moldova», application no. 61513/00, 21/12/2004**):**

Այլ գործով Եվրոպական դատարանը նշել է, որ օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլնի, կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը» **(«**Hilda Hafsteinsdottir v. Iceland», application no.40905/98, 08.06.2004, p. 56**):**

Վերոնշյալի լույսի ներքո Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսվել է նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու ժամկետը երկրորդ անգամ երկարաձգվելու դեպքում երաշխիքային գումարը Հանձնաժողովի սահմանած կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հնարավորությունը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը փաստում է, որ ԼԷ №0629 լիցենզիայի պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2019 թվականի սեպտեմբերի 1-ը Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Կայանի կառուցման նախագիծը, ինչը չի կատարվել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2020 թվականի հունիսի 1-ը:

Միևնույն ժամանակ, Որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը մինչև 2020 թվականի հունիսի 1-ը նույնպես Հանձնաժողով չի ներկայացրել պահանջվող նախագիծը, քանի որ ներկայացված նախագծային փաստաթղթերը չեն պարունակել 110 Կվ լարման էլեկտրահաղորդման գծի կառուցման վերաբերյալ տեղեկություններ, և առկա չեն եղել էլեկտրահաղորդման գծի կառուցման նախագիծ ու դրանց առնչությամբ համապատասխան փորձաքննությունները, որի հետևանքով նշված ժամկետը, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան, համարվել է երկրորդ անգամ երկարաձգված:

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ դեպքում վիճարկվող ակտով լուծվել է Ընկերության կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը 2-րդ անգամ երկարաձգվելու պարագայում ընկերության նկատմամբ վարչաիրավական ներգործություն իրականացնելու հարցը, որպիսի պայմաններում հենց վիճարկվող վարչական ակտում ներառված՝ Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և Երաշխիքների կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը ամենաանմիջական ձևով են կարգավորում խնդրո առարկա հարաբերությունները: Ընդ որում, նշված իրավական հիմքերը, ինչպես նաև վարչական ակտում շարադրված փաստական հանգամանքները լիարժեքորեն ներկայացնում են արձանագրված խախտման հանգամանքները՝ կապելով դրանք կոնկրետ իրավանորմերի հետ, հետևաբար այդ տեսանկյունից Ընկերությունը որևէ կերպ չի զրկվել

գործնականում իր իրավունքների իրավական պաշտպանությունն իրացնելու իրավունքից: Այսինքն՝ վարչական ակտի բովանդակությունից Ընկերությունը կարող է լիարժեքորեն պատկերացում կազմել ինչպես տվյալ դեպքում կատարված՝ էներգետիկայի ոլորտի օրենսդրության կոնկրետ խախտման հանգամանքների, այնպես էլ կոնկրետ իրավանորմերի վերաբերյալ ու համապատասխանաբար պաշտպանել իր իրավունքները: Միևնույն ժամանակ, վերոշարադրյալ իրավակիրառ պրակտիկայի համատեքստում որոշակիության իրավական չափանիշներին բավարարում են ինչպես Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և երաշխիքների կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը, այնպես էլ Որոշումը, քանի որ դրանով ներկայացված խախտումները հստակ են, կարող էին լիարժեքորեն կանխատեսվել Ընկերության՝ որպես լիցենզավորված սուբյեկտի կողմից, և դրանով Հանձնաժողովը պարզապես իրացրել է իր լիազորությունը:

Վերը նշվածի հիման վրա Հանձնաժողովը վերստին փաստում է, որ Որոշումն ընդունվել է հիմնավորվածության ու որոշակիության պահանջների լիարժեք պահպանմամբ:

Ինչ վերաբերում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության պարզաբանումներին չանդրադառնալու և այդ կերպ Ընկերության լսված լինելու իրավունքը ի սկզբանե ձևական նորմերի պահպանմամբ պայմանավորելու վերաբերյալ Ընկերության պնդմանը, ապա այն հիմնազուրկ է, քանզի Որոշմամբ հստակ արտացոլվել է Ընկերության կողմից հիշյալ պարզաբանումների մատնանշման հանգամանքը և դրանց տրվել Հանձնաժողովի գնահատականը: Մասնավորապես, նշված պարզաբանման իրավաչափությունը Հանձնաժողովի կողմից կասկածի տակ չի առնվում, ավելին, այն որևէ կերպ չի հակասում Որոշմամբ Հանձնաժողովի կողմից հաստատված համարված հանգամանքներին և իրավական գնահատականներին: Այսպես, Ընկերության պնդմամբ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության պատասխանների համաձայն՝ Կայանի նախատեսումն առանց էլեկտրահաղորդման գծի

կառուցման ենթակա չէ պետական համալիր փորձաքննության: Նշված պարզաբանման մեջ բացակայում է նշում ներանցման միջոցով գծի կառուցմամբ Կայանի նախագծի փորձաքննության ենթակա չլինելու մասին: Այսինքն, հիշյալ պարզաբանումը վերաբերելի չէ քննարկվող իրավահարաբերությանը: Ընկերությունը, ինչպես Որոշման ընդունմանն ուղղված, այնպես էլ սույն վարչական վարույթի շրջանակում որևէ ապացույց կամ հիմնավորում (այդ թվում՝ իրավասու մարմնի կողմից տրված պարզաբանում) չի ներկայացրել առ այն, որ նշված ներանցումը չի ենթադրում 110կՎ լարման էլեկտրահաղորդման գծի կառուցում, հետևաբար նաև չի պահանջվում համապատասխան փորձաքննության իրականացում, այն պարագայում, երբ Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ավելին, անկախ էլեկտրահաղորդման գծի միացման ձևից և էլեկտրահաղորդման գծի երկարությունից, նախատեսվող գործունեությունը փորձաքննության ենթակա լինելու հանգամանքը հաստատվել է նաև իրավասու մարմնի՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից սույն վարչական վարույթի շրջանակում ներկայացված դիրքորոշմամբ:

Անդրադառնալով Որոշման ընդունման վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների վերաբերյալ Ընկերության պնդմանը՝ Հանձնաժողովը վերստին փաստում է, որ որևէ նմանատիպ կամ այլ խախտում Հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել, ինչի առնչությամբ հիմնավորումներն ամրագրված են Որոշման նախաբանի «ը» կետում,

3) Ընկերությունը, որպես Որոշման դեմ բողոքի իրավական հիմք, մատնանշելով Օրենքի մի շարք հոդվածներ և դատական ակտեր, որևէ կերպ չի հիմնավորել Որոշման ընդունմամբ հիշյալ իրավակարգավորումների խախտման հանգամանքը,

4) բացակայում են Որոշման բեկանման՝ Օրենքի 77-րդ հոդվածով սահմանված հիմքերը, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել Ընկերության 2020 թվականի հոկտեմբերի 13-ի վարչական բողոքը՝ Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 9-ի №308Ա որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
դեկտեմբերի 2020թ.